

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

Ք. Գավառ

11.08.2011թ.

Նախագահում էր մարզպետ Ն. Պողոսյանը, մասնակցում էր մարզի խորհրդի 92 անդամներից 83-ը:

Մասնակցում էին Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահ Ս. Մնացականյանը, մարզպետի տեղակալ Գ. Ստեփանյանը, մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ս. Խլղաթյանը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության տարածքային կառավարման և զարգացման վարչության վարչական վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Օհանյանը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, իրավապահ մարմինների ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Ս/թ հոկտեմբերին անցկացվող մարդահամարի նախապատրաստման և անցկացման մասին:

/Զեկ. Ս. Մնացականյան – ՀՀ ազգային վիճակագրական

ծառայության նախագահ/

2. 2011 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ մարզի համայնքների բյուջեների կատարման և նախորդ տարիների կուտակված աշխատավարձերի պարտքի մարման ընթացքի մասին:

/Զեկ. Ա. Սահակյան – ֆինանսական և սոցիալ – տնտեսական  
զարգացման վարչության պետ/

3. Մարզի համայնքներում վարչական վերահսկողության արդյունքների և  
համայնքներում աշխատանքների հրապարակայնության մասին:  
/Զեկ. /Ի. Ասատրյան – տեղական ինքնակառավարման և

հանրապետական գործադիր մարմինների

հարցերով վարչության պետ/

4. Այլ հարցեր:

Արտահայտվեցին՝

Ա. Շահգադյանը - „Գավառի բիզնես կենտրոն,, Հ/Կ նախագահ

Վ. Խլոյանը - Վարդենիսի քաղաքապետ

Վ. Հովհաննիսյանը – մարզպետարանի աշխատակազմի

գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Հ. Բիծյանը - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության

վարչության բնակարանային և ենթակառուցվածքների

գործունեության բաժնի վարիչ

Մարզխորհրդի աշխատանքներն ամփոփեց մարզպետ Ն. Պողոսյանը:

1. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) մեկ անգամ ևս վերանայել համայնքների տնտեսական գրքերը՝ բացառելու համար  
կրկնհաշվարկները.

2) ս/թ հոկտեմբեր ամսին մարդահամար անցկացնելու համար տրամադրել սենյակներ 2,5 ամիս ժամկետով մարդահամարի տեղամասերի և 1,5 ամիս ժամկետով՝ հաշվային տեղամասերի համար.

3) ապահովել, որ համայնքի յուրաքանչյուր փողոց ունենա իր անվան ցուցանակը եվ յուրաքանչյուր տան վրա լինի իր համարը.

4) մինչև ս/թ սեպտեմբերի առաջին տասնօրյակը ներկայացնել մարդահամարին ներգրավվելիք աշխատակիցների թեկնածուների ցուցակը.

5) ս/թ հոկտեմբերին մարդահամարի անցկացման մասին իրազեկել բնակչությանը.

6) կարգավորել համայնքների ղեկավարների աշխատակազմերում ներքին և արտաքին փաստաթղթաշրջանառությունը.

7) ուշադրության կենտրոնում պահել համայնքների բյուջեների կատարումը այն հաշվով, որպեսզի պահպանվի յուրաքանչյուր ամսվա հաշվարկով համամասնությունը և մինչև տարվա վերջ փակել աշխատավարձերի պարտքերը:

2. Մարզի „Գեղամա աշխարհ,, թերթի խմբագիր Խ. Խլղաթյանին՝

8) „Գեղամա աշխարհ,, թերթում հրապարակել մարզի համայնքներում իրականացված վարչական վերահսկողության արդյունքները.

9) թերթի յուրաքանչյուր համարում լուսաբանել մարզի մեկ տեղական ինքնակառավարման մարմնի գործունեությունը:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ